ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՈՍԹԻՆԳԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԾՁԲ-22/5

ք.Երևան «13» «02» 2023թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղար՝ Արամ Նիկոյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» (ԷԿԵՆԳ) ՓԲ ընկերությունը, ի դեմս տնօրեն Լեոնիդ Ավետիսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ «Կատարող»), մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 28.03.2022թ. կնքված N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԾՁԲ-22/5 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 7.5 կետը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով՝ ՀՀ կառավարության 29.12.2022թ.-ի «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2111-Ն որոշումն ուժի մեջ մտնելու փաստը, ուժի մեջ է մտել 31.12.2022թ.-ին կողմերը որոշեցին՝ հաստատել Պայմանագրի N2 հավելվածը՝ «Վճարման ժամանակացույց»-ը, նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N1-ի:

1.2 Պայմանագրի 7.1 կետը լրացնել հետևյալ նախադասությամբ՝ «Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ կետով կողմերը սահմանում են, որ Պայմանագրի պայմանները կիրառվում են նաև 01.01.2023թ.-ից մինչև սույն համաձայնագիրն ուժի մեջ մտնելը Կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ»:

1.3 Պայմանագրով նախատեսված հոսթինգի ծառայությունների մատուցման գումարը՝ 2023 թվականի համար, կազմում է 288000 (երկու հարյուր ութսունութ հազար) ՀՀ դրամ, իսկ մեկ ամսվա համար՝ 24000 (քսանչորս հազար) ՀՀ դրամ:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԾՁԲ-22/5 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը և իր N1 հավելվածը կազմված են 2 էջից՝ հայերեն լեզվով, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, համաձայնագրի N1 հավելվածը համարվում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն	«ԷԿԵՆԳ» ՓԲԸ
ք. Երևան, Արշակունյաց-63	ՀՀ, ք. Երևան,Տիգրան Մեծի 4
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ՝ 1570004596000700
Հ/Հ 900011175016	«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 02204739	ՀՎՀՀ 02707093
ՔԿ ծառայության գլխավոր քարտուղար Ա.Նիկոյան	Տնօրեն Լ.Ավետիսյան
(ստորագրություն)	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«13» «02» 2023 թ. կնքված N 1 Համաձայնագրի
ՀՀ ԱՆ ՔԿԾ-ՄԱ-ԾՁԲ-22/5 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայություն															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում՝												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72211124/3	ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար հոսթինգի ծառայություններ	24000	48000	72000	96000	120000	144000	168000	192000	216000	240000	264000	288000	288000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739

ՔԿ ծառայության
գլխավոր քարտուղար
Ա.Նիկոյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ԷԿԵՆԳ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան,Տիգրան Մեծի 4
Հ/Հ 1570004596000700
«Ամերիաբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 02707093

Տնօրեն՝
Է. Ավետիսյան
(ստորագրություն)
Կ.Տ